



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Գրաճանաչության և զննականության ուսուցումը լեզվական խաղերի միջոցով
ԱՌԱՐԿԱ	Մայրենի
ՀԵՂԻՆԱԿ	Սվետլանա Մելիքի Գրիգորյան
ՄԱՐԶ	Արագածոտն, գ. Լեռնարոտ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Գ. Միքայելյանի անվան միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Ներածություն	3
Գրաճանաչության և զննականության ուսուցումը լեզվական խաղերի միջոցով	5
Հավելված 1	17
Հավելված 2	19
Եզրակացություն	20
Գրականության ցանկ	21

Ներածություն

Կասկած չի հարուցում այն փաստը, որ երեխայի համար մայրենի լեզվի ուսումնական գործընթացը հետաքրքիր դարձնելու և նյութի դասավանդման մատչելիությունը ապահովելու առումով զննականությունը անփոխարինելի դեր ունի ուսուցման բոլոր փուլերում:

Հոգեբանների, մանկավարժների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հինգ-վեց տարեկան երեխաների գործունեության կտրուկ անցումը ուսումնական գործունեության նրանց մեջ առաջ է բերում մինչ այդ ձևավորված հոգեկան գործընթացների արմատական փոփոխություն: Հենց այդ պատճառով էլ երեխայի զարգացմանն ու կրթությանը կարող ենք անուղղելի վնաս հասցնել, եթե նրան չափազանց վաղ և ոչ ճիշտ ձևով մտցնենք այդ նոր աշխարհը: Հաշվի առնելով այս ամենը՝ ուսուցումը կազմակերպելիս հարկավոր է նախ կարևորել զննական պարագաների տեսակն ու քանակը և դասին համապատասխան լինելը: Հանրահայտ է, որ հետաքրքրություն ստեղծող նյութի ազդեցությամբ միտքը գործում է ավելի ակտիվորեն, լարում է երեխայի ուշադրությունը, որի ֆիզիոլոգիական հիմքը գլխուղեղի կեղևում տեղի ունեցող հիմնական նյարդային գործընթացներն են: Դիտելով, զննելով աշակերտը կարողանում է նոր տեսանկյունով ընկալել, ճանաչել մինչև այդ իրենց հանդիպած երևույթներն ու առարկաները: Նա դիտման պրոցեսում ձեռք է բերում վերլուծելու և համադրելու, համեմատելու և հակադրելու, դասակարգելու և ընդհանրացնելու կարողություններ: Առաջին հիմնական առանձնահատկությունը պետք է լինի խաղալով ուսուցանելու պահանջի գործադրումը: Ստեղծագործող ուսուցիչը կարող է որոնել ու գտնել նոր ձևեր ու եղանակներ՝ աշխատանքն ավելի հետաքրքիր, մատչելի ու արդյունավետ դարձնելու համար:

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

Աշխատանքը ներկայացնում է լեզվական խաղերի դերը գրաճանաչության և զննականության զարգացման հարցում: Մենք ներկայացնում ենք լեզվական խաղերը, որպես գրաճանաչության ուսուցման կարևորագույն բաղադրիչ և գիտելիքների կառուցմանը, հմտությունների ու կարողունակությունների ձևավորմանը նպաստող գործոն:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել զննականության սկզբունքի գործադրության դերը և դրա ուսուցումը լեզվական խաղերի միջոցով:

Հետազոտության խնդիրներն են՝

1. ուսումնասիրել զննականության դերը գրաճանաչության ուսուցման արդյունավետության բարձրացման գործընթացում՝

ա/ լեզվական նախագիտելիքների ուսուցման գործընթացում,

բ/ կարդալու կարողությունների ձևավորման գործընթացում.

2. արժևորել խաղերի դերը զննականության ուսուցման գործում

Հետազոտության թեմայի արդիականությունը

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ խաղերն ու զննականության զարգացումը մեծ դեր ունեն երեխաների գրաճանաչության զարգացման հարցում: Այս գործընթացները օգնում են երեխաներին ավելի արագ և հեշտ ընկալել նյութը և ավելի հիմնավոր գիտելիքներ ձևավորել:

Հետազոտության հարցը

Խաղերի կիրառումը և զննականությունը որքանո՞վ կնպաստեն երեխայի գրաճանաչության բարելավմանը:

Հետազոտության վարկածը

Գրաճանաչության ուսուցման գործընթացում զննական պարագաների և խաղերի նպատակային գործադրումը մեծապես կարող է նպաստել գրաճանաչության ուսուցման արդյունավետ իրականացմանը:

Հետազոտության վերջնարդյունքները

1) Արժևորել լեզվական խաղերով գրաճանաչության և զննականության ուսուցման դերը կրտսեր դպրոցական տարիքում:

2) Գրաճանաչության ուսուցումը դիտարկել այլ տեսանկյունից, կիրառել դասավանդման նոր մեթոդներ և հնարներ:

3) Պարզել թե լեզվական խաղերով ուսուցումը որքանով կնպաստի սովորողների գրաճանաչության մակարդակի բարձրացմանը և զննականության զարգացմանը:

ՉՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԳՐԱՃԱՆԱԶՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ուսուցչի խստությունը հոր քնքշանքից լավ է:

Հինգ-վեց տարեկան երեխաները էապես տարբերվում են յոթ տարեկան երեխաներից և՛ իրենց մտավոր զարգացման մակարդակով, և՛ լեզվական կարողություններով, և՛ աշխարհըմբռմամբ, և՛ ֆիզիկական հնարավորություններով: Ահա թե ինչու՝ անհրաժեշտ է երեխաների հանդեպ համապատասխան մոտեցման, վերաբերմունքի, նյութի բացատրման ու ամրապնդման, ամփոփման ու մտահանգման նոր ձևեր ու եղանակներ մշակել:¹

«Դառնալով աշակերտ, թող երեխան շարունակի այսօր անել այն, ինչ անում էր երեկ, թող նրա կյանքում նորը երևան գա աստիճանաբար և տպավորությունների հեղեղով ապշեցնի նրան»,- ասում է Սուխոմլինսկին:²

Իսկ ի՞նչ էր անում հինգ տարեկան փոքրիկը երեկ. խաղում էր ու երգում, պարում էր ու արտասանում, նվագում էր ու ծեփակերտում: Ուրեմն՝ հենց այստեղից էլ հարկավոր է սկսել նրանց ուսուցումը: Վ. Ա. Սուխոմլինսկու վեց տարեկանների դպրոցը կապույտ երկնքի տակ էր, կանաչ խոտերի մեջ, ճյուղառատ տանձենիների տակ, խաղողի այգիներում, կանաչ մարգագետիններում: Մեծ մանկավարժն իր աշակերտների առաջին օրերը կազմակերպում էր այնպես, որ չլինի, թե հանկարծ որևէ մեկը հիասթափվի դպրոցից, վախենա ուսուցչից և հեռու փախչի ուսումնական գործընթացից: Չլինի թե հանկարծ ժամանակից շուտ ու սխալ ձևով երեխաներին թափանցել տա նրանց համար ոչ տեսանելի, ոչ շոշափելի վերացականի աշխարհը: Գրաճանաչության ուսուցման գործընթացը բավական բարդ և բազմաբովանդակ գործընթաց է, որի ընթացքում ձևավորվում են տարբեր կարողություններ, ձեռք բերվում տարաբնույթ գիտելիքներ:

Լեզվական նախագիտելիքների, ինչպես նաև կարդալու կարողությունների ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման, նյութի ընկալման մակարդակի բարձրացման առումով շատ կարևոր է զննականության ապահովումը: Մայրենի լեզվի ուսուցման գործընթացում զննականության սկզբունքի

¹ Քյուրքչյան Ա. Ն., Տեր-Գրիգորյան Լ. Ա., §Շողիկ՝ այբբենարան, ուսուցչի ձեռնարկ, Երևան, §էդիթ Պրինտ՝, 2007, էջ 3:


² Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, §Լույս՝, 1977, էջ121:

գործածությունն անհրաժեշտություն է՝
ա/ նյութի ընկալման,
բ/ մատուցման մատչելիության,
գ/ ուսուցման գործընթացի արդյունավետության,
դ/ երեխաների հետաքրքրվածության և ակտիվության ապահովման
տեսանկյուններից:



Լեզվական միավորները վերացական են, և երեխաներին դրանք ընկալելի դարձնելու համար մեթոդիկայում տարբեր միջոցներ են գործածվում, որոնց մեջ կարևորագույն տեղ է հատկացվում զննականությունը: Ահա թե ինչու մեթոդիստները լեզվական գիտելիքների ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման համար կիրառում են զննականություն ապահովող տարբեր միջոցներ՝ գծապատկերներ, նկարներ, զանազան կաղապարներ, գունային տարբերակումներ ու ընդգծումներ և այլն: Այսպիսով՝ զննականությունը չափազանց կարևոր դեր ունի գրաճանաչության ուսուցման գործընթացում: Ուսուցման այս փուլում զննականությունն ունի դրսևորման տարաբնույթ ձևեր, որոնցից յուրաքանչյուրը ուսուցողական այս կամ այն նպատակն ունի: Ուսուցիչը պետք է կարողանա լավ ճանաչել դասագրքում զննական միջոցների գործածության բոլոր հնարավոր ձևերը և դրանց նպատակները, որպեսզի կարողանա անհրաժեշտ ուշադրություն դարձնել յուրաքանչյուրի վրա, երեխային ուղղորդել այդ ուղղությամբ աշխատելու և առավել արդյունավետ կազմակերպել ուսուցման գործընթացը՝ զննական նորանոր հնարներ կամ պարագաներ ընդգրկելով ուսումնական գործընթացի մեջ:

Առաջին դասարանում՝ գրաճանաչության ուսուցման նախաայբբենական փուլում, առաջին անգամ ներմուծվում են լեզվական միավորները, որոնց նյութականացման համար Ա.Տեր-Գրիգորյանը ներմուծել է գծային մոդելների կամ գծապատկերների համակարգը: Դրանց մեջ լեզվական յուրաքանչյուր միավոր՝ խոսք /կամ պատմություն/, նախադասություն, բառ, խոսքային միավոր՝ վանկ, հնչյուն՝ իր տարատեսակներով՝ ձայնավոր և բաղաձայն, ունի իր խորհրդանիշ գծապատկերը: Ընդ որում՝ վերջին երկուսի զանազանման համար ընտրվել է գունային տարբերակման եղանակը. ձայնավորի խորհրդանիշը կարմիրն է, բաղաձայնինը՝ կապույտը:

Այսպիսով գույնը ևս դառնում է ուսուցման զննականությունն ապահովող միջոց:



Կան նաև մի շարք այլ խորհրդանիշներ, որոնք օգնում են զննականության միջոցով զարգացնել երեխանների մոտ սովորածը մտապահելու կարողությունը: Դրանցից են օրինակ տարբեր գույների կիրառումը, ստվերագծված կարմիր վանդակը և այլն:



Այս խորհրդանիշերը պետք է պահպանվեն ոչ միայն գրաճանաչության ուսուցման շրջանում, այլև դրանից հետո, որպեսզի զննականության գունային տարբերակման կիրառությունը երեխաների համար նույնը լինի և շփոթության ու թյուրըմբռնման պատճառ չդառնա:

Երեխաների ուսուցումն այս տարիքում նպատակահարմար է իրականացնել խաղի ճանապարհով: «Ավելի շատ խաղ, ուրախություն ու զվարճալիք պետք է լինի, և համեմատաբար քիչ՝ լուրջ աշխատանք, ավելի քիչ՝ պարտադրանք, շատ՝ վարժեցում».- ասել է Աշոտ Տեր-Գրիգորյանը:

Խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերից մեկն է: Այն ծագում է մանկության շրջանում և մարդուն ուղեկցում ողջ կյանքի ընթացքում:

Վաղ տարիքում խաղը երեխայի հիմնական գործունեությունն է, որով նա ճանաչում է ինքն իրեն, աշխարհը, սովորում է խոսել, շփվել, պահպանել ընդունված նորմերը և այլն:

Խաղը՝ որպես նախադպրոցականի առաջատար գործունեություն, երեխայի զարգացման ու դաստիարակության լավագույն միջոցն է և նպաստում է նախադպրոցականի ճանաչողական, հուզականային և բարոյական զարգացմանը, նորմերի յուրացմանը, բառապաշարի հարստացմանը, հաղորդակցական հմտությունների ձևավորմանը: Երեխայի խաղն ընթանում է խոսքի ուղեկցմամբ: Նա խոսում է նույնիսկ այն ժամանակ, երբ մենակ է խաղում: Խոսքը կարևոր դերն ունի մարդու կյանքում, քանի որ այն հանդիսանում է հաղորդակցման հիմնական միջոց և իրականացնում մի շարք գործառույթներ:

Խոսքի միջոցով մենք ստանում և հաղորդում ենք ինֆորմացիա, կարգավորվում է մարդու վարքն ու գործունեությունը:

Խաղը պետք է կազմակերպվի որպես երեխաների հետ դաստիարակի համատեղ գործունեություն: Մեծը հանդես է գալիս խաղընկերոջ և ոչ թե պարտադրողի դերում:

Խաղային գործունեության մանկավարժական նշանակությունը երեխաների կյանքում կարևորել են Ա. Կոմենսկին, Ժ. Ռուսոն, Ֆ. Ֆրյոբելը մանկավարժներ Խ. Աբովյանը, Ղ. Աղայանը, Հ. Թումանյանը և այլք: Խ. Աբովյանը մանկավարժների հորդորում էր «չզրկել երեխային անմեղ խաղերից»: Հ. Թումանյանը գտնում էր, որ խաղը երեխայի բնական օրգանական պահանջն է, նրա էությունը: Խաղը ոչ միայն երեխային զարգացնում է համակողմանի, այլ նաև զարգացնում է երեխայի հոգեկան գործընթացները:

Խաղը ստեղծագործական գործունեություն է, քանի որ այն նպաստում է յուրաքանչյուր խաղացող երեխայի անհատական առանձնահատկությունների բացահայտմանը: Խաղի ընթացքում դրսևորվում են երեխայի հակումներն ու հետաքրքրությունները: Նախադպրոցականի խաղային գործունեության միջոցով իրականացվում են հետևյալ հիմնական խնդիրները.

Խաղերը կրթում, դաստիարակում և զարգացնում են երեխաներին:

Աշոտ Տեր-Գրիգորյանը մի քանի առանձնահատկություն է նշում, որոնք հստակ

են վեց տարեկանների ուսուցման գործընթացին: Առաջին հիմնական առանձնահատկությունը պետք է լինի «զվարճացնելով ուսուցանելու» պահանջի գործադրումը: Այն իր արտահայտությունը պետք է գտնի ուսումնական բոլոր առարկաների և, հատկապես, մայրենի լեզվի դասերին, որոնք ավելի լայն հնարավորություն են ստեղծում աշխատանքն այդ ձևով կազմակերպելու համար:¹

«Այբբենարանը»², հատկապես իր ընդգրկած հանելուկներով, շուտասելուկներով, կատակային նյութերով, անավարտ բնագրերով, արտադասարանական ընթերցանության համար նախատեսված նյութերով, խաղերով և դասագրքի հերոսների առկայությամբ ու նկարազարդումներով, «Զվարճացնելով ուսուցանելու» և ուսումնական մի հետաքրքիր աշխարհի ձևավորելու լայն հնարավորություն է ընձեռում: Նախապատրաստական փուլի յուրաքանչյուր էջ-դաս հնարավորություն է տալիս դասը մի ընդհանուր խաղի վերածելու, որի ընթացքում կարելի է իրականացնել թե՛ խոսքի զարգացման, թե՛ լեզվական նախագիտելիքների ուսուցման, թե՛ տրամաբանական և թե՛ աշխարհիճանաչողական և դաստիարակչական աշխատանքներ:

Հաշվի առնելով այս ամենը՝ վեց տարեկանների ուսուցումը կազմակերպելիս հարկավոր է ուշադրություն դարձնել դասի հետաքրքրաշարժությանը:

5.5–6 տարեկաններով համալրված առաջին դասարանների դասի կահավորման հիմնական բաղադրիչ խաղալիքն է, որը հանդես է գալիս, որպես զննական պարագա:

Երեխաների կենսափորձին ծանոթ են, հարազատ են ոչ միայն խաղալիքները, այլև նրանց շրջապատող առարկաներն ու երևույթները իրենց բնական վիճակում: Այդ իսկ պատճառով գերադասելի է բնական դիդակտիկ նյութերի օգտագործումը: Նման դեպքերում աշակերտն ավելի ամբողջական գաղափար է կազմում առարկայի բոլոր էական հատկանիշների մասին (ձևի, գույնի, երբեմն՝ նաև հոտի և համի): Այդպիսի զննական պարագաներ են տերևները, ծաղիկները, մրգերը, կենդանիները, թռչունները և այլն: Այսպես, նրանք մեծ հետաքրքրությամբ, հաճույքով և եռանդով են նկարում, երբ նյութը բնական է: Առաջին դասարանի երեխաներին առաջարկեցի

¹ Տեր-Գրիգորյան Ա. Ե., Վեց տարեկան երեխաները դպրոցում, Երևան, §Լույս!, 1986, էջ 11:

² Քյուրքչյան Ա. Ն., Տեր-Գրիգորյան Լ. Ա., §Շողիկ! այբբենարան, Երևան, §Էդիթ Պրինտ!, 2006, էջ 29:

նկարել աշնանային մրգեր: Որպես դիդակտիկ նյութ դասարան էի բերել զանազան գույնի ու ձևի մրգեր, ճյուղեր: Սրանք դրված էին աշակերտական նստարաններին, սեղաններին, պատուհանագոգերին: Ձարմանալի ներքին ոգևորություն, հուզմունք կար վեց տարեկանների հայացքներում: Ջրուցում էի նրանց հետ, շրջում, մտքեր փոխանակում մրգերի գույների, ձևերի մասին, հուշում նրանց մատիտներ ու գույներ ընտրելու հարցում: Երեխաները մեծ հաճույքով նկարեցին, իսկ նրանց նկարները հուզիչ էին, գունագեղ: Դասի այսպիսի բնական կահավորումը երեխաների մեջ առաջացրել էր աշնանային հույզեր, նրանք հազիվ թե հետագայում մոռանան աշնանային գույները:

Խոսելով կրտսեր դպրոցականի մասին Կրուտեցկին գրում է. «Ակնառուն, ցայտունը, իրականը ավելի լավ, ավելի հստակ, ավելի հուզիչ է ընկալվում քան, օրինակ, սիմվոլիկ և սխեմատիկ պատկերները»:¹

Այն դասերը, որոնք անց են կացվում հենց բնության գրկում, այսինքն՝ որպես դասի կահավորում օգտագործվում է բնությունն իր ամբողջության մեջ ավելի լիարժեք են: Բնության հետ հաղորդակցվելը ակտիվացնում է երեխայի մտածողական գործունեությունը: Դիտման գործընթացն աշակերտների առջև մշտապես դնում է հետաքրքիր խնդիրներ, որոնց լուծումը հնարավոր է միայն որոնումների ճանապարհով: Որքան ավելի շատ է երեխան լինում բնության մեջ, այնքան շատ է իր առջև խնդիր դնում՝ բացահայտել բնության երևույթների պատճառահետևանքային կապերը: Սա զարգացնում է երեխայի հետաքրքրությունը, որն իր հերթին կարող է վերաճել որոնումների, որովհետև երեխայի մեջ ծագող ինչուները նրան տանում են արտաքուստ կարծես թե ծանոթ երևույթների նորանոր կողմերի ու հատկանիշների ճանաչումը:

Ջննական պարագաները և ուսումնաօժանդակ նյութերը՝ պատրաստի կամ ձեռագործ (ուսուցչի կողմից պատրաստված), պետք է լինեն գրաճանաչության գործընթացի պարտադիր բաղադրիչները. դրանք ուսուցումն առավել հետաքրքրական ու արդյունավետ են դարձնում՝ տառադարան, տառային լսող, պաստառներ, պատկերազարդ տառեր(այբուբեն), աշխատանքային տետրեր, աշխատանքային քարտեր, նորագույն տեխնոլոգիաներ՝ համակարգչային խաղեր,

¹ Կրուտեցկի Վ. Ա. , Մանկավարժական հոգեբանության հիմունքներ, Երևան, §Լույս!, 1976 , էջ 89:

էլեկտրոնային նյութեր, մուլտֆիլմեր, ձայնագրություններ ու տեսագրություններ և այլն: Այնուհանդերձ կարծում ենք, որ նորագույն տեխնոլոգիաների ընդգրկումը գրաճանաչության ուսուցման գործընթացում չպետք է չարաշահել, քանի որ գրաճանաչության գործընթացի հիմնական նպատակը երեխային գրել և կարդալ սովորեցնելն է, մի գործընթաց, որի մեջ առաջնահերթ դեր են կատարում մարդ-մարդ անմիջական՝ կենդանի փոխհարաբերությունները, թուղթն ու գրիչը, գիրքը և երեխայի անմիջական շփումն ու աշխատանքը դրանցով: 5.5–6 տարեկաններին շատ է դուր գալիս, երբ որպես դասի կահավորման յուրահատուկ ձև օգտագործում են իրենց իսկ ձեռքով պատրաստած դիդակտիկ նյութերը:

Երբ անցնում էի «Օջականյան հյուրընկալություն» դասանյութը,³ երեխաների հետ այցելեցինք «Մաչանենց տուն», որտեղ նրանք մանրամասն ծանոթացան հաց թխելու գործընթացին և կազմակերպեցին փոքրիկ հյուրասիրություն:

5.5–6 տարեկանների ուսուցման գործընթացում մեծ տեղ է տրվում նկարներին: Նկարը ուսուցչին հնարավորություն է տալիս ընկալելի դարձնել այն առարկաներն ու երևույթները, որոնք միշտ չէ, որ հնարավոր է կամ անհրաժեշտ բնական վիճակում ցուցադրել: Ուսուցիչը նկարով հնարավորություն է ունենում երեխայի մեջ ստեղծել ուսումնասիրվող երևույթների և առարկաների համապատասխան մտապատկերները: 5.5–6 տարեկանների համար ստեղծված թ՛ե մաթեմատիկայի, թ՛ե մայրենիի դասագրքերը, և թ՛ե Այբբենարանը հագեցված են նկարներով: «Այբբենարանում» պատմության, նախադասության, բառի, վանկի, յուրաքանչյուր տառի գաղափարը մատուցված է որոշակի սյուժետային և առարկայական նկարներով: Այսպես, հնչյունի ուսուցման ժամանակ երեխաներին համապատասխան նկարներ են ցուցադրվում և տրվում է առաջադրանք՝ ստուգել, թե սովորած հնչյունը, որ նկարի անվան մեջ կա: Ապա տրվում է նոր առաջադրանք՝ բանավոր թվարկումով առանձնացնել այն նկարները, որոնց անվան մեջ կա տվյալ օրվա սովորած հնչյունը՝

1. բառասկզբում
2. բառամիջում
3. բառավերջում:

³ Դ. Գյուրջինյան, Ն.Հեքեքյան, Մայրենի 4, Էդիթ պրինտ, Երևան 2019

Նկարներն «Այբբենարանում», իհարկե, ունեն բազմապիսի գործառույթներ, ինչպես՝ ա/ չգրված առարկայի, գործողության, պատմության ցուցադրություն,

բ/ գրված բառի, ամբողջ բնագրի կամ բնագրի չգրված հատվածը լրացնող կտորի ցուցադրություն,

գ/ խաղի իյուստրացիա, դ/ ժողովրդական մանրապատում ստեղծագործության իյուստրացի (հուշադ, գուշակելուն կամ ընկալելուն նպաստող) և այլն,

Նկարները 5.5–6 տարեկաններին տրվում են տարբեր լեզվական նպատակներով.

- գտնել դրանց ընդհանուր նշանակությունն արտահայտող բառեր,
- առանձնացնել կենդանիների, թռչունների, կահույքի, գրենական պիտույքների նկարները:

Նկարների ցուցադրմանը զուգակցվող այդպիսի առաջադրանքներն օգնում են աշակերտների գիտելիքների ճանաչողական կողմը զարգացնելուն և ընդհանուրի ու մասնավորի փոխհարաբերությանը հաղորդակից լինելուն:

Այբբենարանում կան նաև հատուկ նպատակով տեղադրված նկարներ՝ բանավոր խոսքի զարգացման համար: Սրանք նկար- պատմություններ են, որոնց շնորհիվ զարգանում է երեխաների դիտելու կարողությունը, կապակցված խոսքը, նյութը որոշակի տրամաբանությամբ հաղորդելու ունակությունը: Այլ կերպ ասած՝ նկարը նպաստում է վեց տարեկան երեխայի մտածողության զարգացմանը:

Հենվելով Դիստերվերգի, Պեստալոցցու, Ուշինսկու, Աբովյանի՝ ուսուցման մեջ զննականության անհրաժեշտության պահանջի վրա, հարկավոր է նաև հաշվի առնել ժամանակակից հոգեբանների և մանկավարժների այն կարևոր հետևությունները ըստ որոնց ժամանակակից երեխաները շատ ավելի մտավոր գործողությունների են ընդունակ, շատ ավելի զարգացած են, քան նույնիսկ սրանից տասը տարի առաջվա երեխաները: Ուսուցման գործընթացում զննականության անհրաժեշտությունը վաղուց հիմնավորվել է մանկավարժության պատմության մեջ, իսկ գործնական աշխատանքում մանկավարժության մեջ այն կիրառվել է շատ ավելի վաղ: Սակայն զննականությունն այսօր նոր գործառույթ է կատարում: Ժամանակակից հոգեբանամանկավարժական գրականության մեջ այն արդեն չի դիտվում որպես

նյութի լուսաբանում, որպես պայման երեխայի առարկայական կոնկրետ պատկերացումների ձևավորման, այլ առաջին հերթին այն կոչված է ծառայելու ժամանակակից ուսուցման հիմնական խնդրին՝ զարգացնող ուսուցմանը:

Նյութի յուրացումը ավելի արագ է կատարվում, երբ այն մատուցվում է միաժամանակ չորս կողերի օգնությամբ՝ **նկարագրական, թվային, խորհրդանշական և բառային**: : Այդ իսկ պատճառով պրոֆեսոր Ա. Տեր-Գրիգորյանի առաջարկությամբ նախապատրաստական դասարանի ուսուցման գործընթաց մտցվեց մոդելը՝ որպես ավելի վերացական, ավելի ընդհանրացված, խորհրդանշական զննական նյութ:¹

Այբբենարանում² օգտագործված պայմանական պատկերների միջոցով 5.5–6 տարեկան երեխան ոչ միայն տեսնում է ծաղիկն ու գրչատուփը և նրանց պատկերների տակ տեղադրված գծապատկերները կարդում, որպես բառ, այլ առաջին հայացքից ոչինչ չհիշեցնող գծապատկերներով կազմում տասնյակի հասնող միավանկ և բազմավանկ բառեր, զարմանալի արագությամբ գտնում գծապատկերում ձայնավոր և բաղաձայն հնչյունների տեղը, գունավորում դրանք: Կամ գծում է պատմության, նախադասության գծապատկերները, բաժանում դրանք մասերի՝ բառերի, պայմանականորեն նշում նախադասության սկիզբն ու ավարտը: Սրանք փոքրիկ վերացական գործողություններ են, որոնք երեխայի ուղեղը մարզում են հետագայում հանդիպող ոչ շոշափելի երևույթների ընկալման համար: Այս իմաստով 5.5–6 տարեկաններով համալրված առաջին դասարաններում հանձնարարելի է նաև որպես դիդակտիկ նյութ օգտագործել պայմանական զննականությունը, որը այստեղ օգտագործվում է սխեմաների, գծապատկերների ձևով: Սրանք ոչ միայն տալիս են ամբողջի ծավալուն սխեման, այլև մասերի հարաբերակցությունը, դրանց փոխադարձ կապը:

Այսպես, օրինակ, այսօր գործածության մեջ գտնվող «Այբբենարանի»¹ «Իմ առավուտը» նկար-պատմությունն անցնելիս տրվում է պատմությունից նախադասություն, նախադասությունից բառ, բառից վանկ, վանկից հնչյուն՝

¹ Տեր-Գրիգորյան Ա. Ե., §Արևիկ! այբբենարանի ուղեցույց, §Լույս!, 1975, էջ 26:

² Նույն տեղում:

³ Քյուրքչյան Ա. Ն., Տեր-Գրիգորյան Լ. Ա., §Շողիկ! այբբենարան, Երևան, §Էդրթ Պրինտ!, 2006, էջ 27:

նկարների և դրանց բառային արտահայտությունների համեմատումն ու հակադրումը, նախադասության գծային մոդելավորումը: Խորհրդանշական զննականության այդ տեսակի մոդելի օգնությամբ երեխան պատկերացում է կազմում նախադասության, նրա կառուցվածքի, գրելու ձևի մասին: Օրինակ՝ երեխաները կազմում են նախադասություններ՝ «Արան արթնացավ: Արան հավաքեց անկողինը: Արան ու Տոտոն մարզվում են»: Դրան համապատասխան նրանք գծում են գծապատկերներ և բացատրում: Սկզբի հոծ գիծը նշանակում է, որ նախադասությունը սկսվում է մեծատառով, վերջում դրվում է վերջակետ: Դեռևս իր ժամանակին Յա. Ա. Կոմենսկին, Գ Պեստալոցցին, Կ. Դ. Ուշինսկին ընդգծել են ուսուցման գործընթացում զննականության ունեցած դերը և ինչ-որ տեղ նույնիսկ չափազանցել: Այժմ փոխվել են ուսուցման գործընթացում զննականության գործառույթի մասին եղած կարծիքները. հոգեբանները և մանկավարժները նոր տեսանկյունով են նայում այդ հարցին: 5.5–6 տարեկաններով համալրված առաջին դասարանների ուսուցման գործընթացում մեծ տեղ է տրվում նաև տեխնիկական միջոցներին: Ուրախությամբ ուզում եմ փաստել, որ ժամանակակից դպրոցները հագեցած են էլեկտրոնային գրատախտակներով, որոնց գործածումը էլ ավելի արդյունավետ է դարձնում ուսուցանվող նյութի ընկալումը: Վերջիններս, բացի այն բանից, որ տալիս են ուսումնասիրվող առարկայի և երևույթի անմիջական պատկերացումը, ունեն մեկ կարևոր գործառույթ ևս: Դրանք աշակերտների մեջ մշակում են զգացմունքային վերաբերմունք հաղորդվող գիտելիքների նկատմամբ: Աշակերտը, դիտելով կինոնկարը, դիաֆիլմը կամ դիոպոզիտիվը, ավելի խորությամբ է ընկալում հաղորդվող նյութը: Ուսումնական դիաֆիլմն ու դիապոզիտիվն օգտագործում են՝

- նոր նյութը հաղորդելիս,
- ամրապնդելիս
- անցածը կրկնելիս,
- գիտելիքները ստուգելիս:

Գրաճանաչության ուսուցման ընթացքում, զննական պարագաների, առանձնապես նկարների օգտագործման վերաբերյալ մեթոդական գրականության մեջ զգալի վեճեր ու տարաձայնություններ են եղել: Մեթոդիստ-մանկավարժների մի

մասը մեծ տեղ է տվել նկարներին ու զննականությանը, մյուս մասը ժխտել է դրանց դերը՝ շեշտը դնելով ոչ թե տեսողության, այլ մտքի գործունեության վրա: Հայտնի է, որ եղել են նույնիսկ բացարձակապես պատկերազուրկ կամ սակավապատկեր հայտնի Այբբենարաններ, ինչպես օրինակ՝ Ղ. Աղայանի, Ս. Մանդինյանի Այբբենարանները: Սակայն այդ երկու ուղղությունների ներկայացուցիչները ծայրահեղության էին հասնում: Ձննականությունը, որպես ուսուցման մեթոդ, գործադրելի է տարեկանների ուսուցման բոլոր բնագավառներում, սակայն նկարների շատությունը հաճախ կարող է ուսուցման հիմնական նպատակը երկրորդ պլանի վրա մղել: Այս առումով Այբբենարաններից պետք է հանել հուշող նկարները, որոնք սահմանափակում են աշակերտների ինքնուրույն աշխատանքը: Սակայն հաղորդվելիք բովանդակության զգալի մասը փոխանցվում է նկարների միջոցով, որոնք ոչ միայն ճանաչողական, այլև գեղագիտական դաստիարակության նպատակ են հետապնդում:

Գրաճանաչության ուսուցման շրջանում գործադրելի են հետևյալ զննական պարագաները, որոնցից ամեն մեկն ունի իր ուրույն նպատակներն ու խնդիրները և պետք է տեղին ու ճիշտ օգտագործվի, որպեսզի պահանջված արդյունքը տա:

Այբուբենը նկարներով. զննական նյութերի այս համալիրը ներկայացնում է այբուբենի յուրաքանչյուր տառին համապատասխանող հնչյունով սկսվող բառ-առարկայի նկարը, որը ցուցադրվում է հնչյունային վերլուծություն կատարելուց առաջ և այդ վերլուծության համար հիմնական մեկնաբառ դառնում:

Տպագիր և ձեռագիր այբուբեն. ինչպես տպագիր, այնպես էլ ձեռագիր այբուբենը գրաճանաչության ուսուցման համար անհրաժեշտություն են և դասարանում մեծադիր պլանի ձևով պետք է փակցված լինեն:

Տառարաններ կամ տառադարաններ. սա հայերենի այբուբենում եղած տառերի քանակին համապատասխանող գրպանիկներով փոքրադիր ու մեծադիր այբուբեն է, որոնց օգնությամբ աշակերտները համադրման ու կարդալու վարժություններ են կատարում: Փոքրադիր տեսակը տպագրվում է գրեթե ամեն տարի և գործածության մեջ է դարձնում: Մեծադիրը ուսուցիչներն իրենք են պատրաստում ու գործադրում, որովհետև առանց դրա գրաճանաչության ուսուցումը հնարավոր չէ պատկերացնել:

Առարկայական նկարներ. սրանք կարող են պատրաստել բոլոր ուսուցիչները և օգտագործել հնչյունային վերլուծությունների ու բառից անջատած հնչյունն ամրապնդելու համար: Յուրաքանչյուր պաստառում կարող են ընդգրկվել մի շարք առարկայական նկարներ, որոնց անուններում նոր հնչյունն օգտագործված է բառասկզբում, բառամիջում և բառավերջում: Սրանց շուրջ կատարվող աշխատանքները նպաստում են ոչ միայն գրաճանաչության ուսուցմանը, այլև բառապաշարի հարստացմանը:

Գծապատկերներ. սրանք լեզվական վերացական նյութը հասանելի են դարձնում 5.5–6 տարեկաններին, իսկ մյուս կողմից նպաստում են վերացական մտածողության զարգացմանը: Սրանք լայն գործածություն ունեն և՛ նախապատրաստական, և՛ բուն գրուսուցման շրջանում:

Այլ նյութեր. գրաճանաչության ուսուցման համար, որպես զննական նյութեր կարող են օգտագործվել նաև տառային ու վանկային խաղերը, նկարներով ու բառային լոտոները, նախադասությունների ընթերցման քարտերը, գրավոր հանձնարարությունների անհատական քարտերը:

Ստեղծագործող ուսուցիչը կարող է այսքանով չբավարարվել, որոնել ու գտնել նոր ձևեր ու եղանակներ՝ աշխատանքն ավելի հետաքրքիր, մատչելի ու արդյունավետ դարձնելու համար:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Դասի պլան

Ամսաթիվ		
Դասարան	IV	
Ուսուցիչ (ներ)	Սվետլանա Գրիգորյան	
Առարկա	Մայրենի	
Թեման	Օջականյան հյուրընկալություն	
Հիմնական հասկացություն	Ինքնություն	
Ենթահասկացություն	Արժևորում	
Խաչվող կամ ընդհանրական հասկացություն	Անհատներ և հարաբերություններ, անհատական և մշակութային արժեհամակարգ	
Միջառարկայական կապեր	Տեխնոլոգիա, գրականություն, հայոց պատմություն	
Ձևավորվող կարողունակություն	Սովորել սովորելու կարողունակություն, ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն	
Նպատակները	<ul style="list-style-type: none"> • Արժևորել ազգային մշակույթի դերը անհատի զարգացման գործում: • Դաստիարակել հայրենասիրություն: • Ձևավորել հարգանք ազգային արժեքների և այլազգիների մշակույթի հանդեպ: • Զարգացնել կարդալու և կարդացածը վերարտադրելու կարողությունը: 	
Խնդիրներ	<ul style="list-style-type: none"> • Ձեռքի տակ ունեցած դիդակտիկ նյութերի միջոցով երեխաներին ծանոթացնել հայկական մշակույթի մնայուն արժեքների հետ: • Աշակերտների մոտ արմատավորել «Աշխատանքը մայրն է ամեն բարիքի, իսկ ծուլությունը՝ չարիքի:» ասույթի միտքը: 	
Վերջնարդյունք(ներ)	Վարժ կարդա տեքստը: Վերարտադրի տեքստի բովանդակությունը: Առանձնացնի գլխավոր միտքն ու ընթերցողին տրվող խրատը:	
Անհրաժեշտ նյութեր	Գիրք, տետր, գրատախտակ, պաստառ	
Կիրառվող մեթոդներ		

Ժամանակ	<i>Ընթացքը</i> 45ր.	
5 րոպե	Խթանում Կիրառել ԳՈՒՍ մեթոդը: Գրատախտակին գծել աղյուսակ և աշակերտներին առաջարկել լրացնել Գիտեմ հատվածը: Երեխաները կթվարկեն թե ինչ գիտեն լավաշի ստեղծման պատմության և պատրաստման վերաբերյալ:	
20 րոպե	Իմաստի ընկալում Կիրառել ցուցահանդես մեթոդը: Աշակերտներին բաժանել խմբերի, յուրաքանչյուր խմբին հանձնարարել ուսումնասիրել հացի պատրաստման փուլերից մեկը և դա ներկայացնել պաստառի ձևով: Աշխատանքն ավարտելուց հետո կազմակերպել փոքրիկ ցուցադրություն, որի ժամանակ յուրաքանչյուր խումբ կներկայացնի իր կատարած աշխատանքը: Աշակերտները ընդհանուր գաղափար կկազմեն լավաշի պատրաստման գործընթացի վերաբերյալ:	
15 րոպե	Կշռադատում Լրացնել աղյուսակի Սովորեցի հատվածը, նշելով թե ինչ սովորեցին դասի ընթացքում: Աղյուսակի Ուզում եմ իմանալ հատվածը թողնել լրացնելու տանը, որի ընթացքում աշակերտները կնշեն իրենց հուզող հարցերը, իսկ դրանց պատասխանները կքննարկվեն հաջորդ դասի ընթացքում:	
1 րոպե	Անդրադարձ, Ի՞նչ արեցինք, ինչո՞ւ և ի՞նչ նոր բան իմացար: Ի՞նչը քեզ զարմացրեց:	
4 րոպե	Տնային կամ յուրացման աշխատանք Գտնել և հավաքել նյութեր հացի ստեղծման պատմության և պատրաստման վերաբերյալ: Պատրաստել հարցեր, որոնք կքննարկվեն «Մաչանենց տուն» այցի ժամանակ:	Կարող են տրվել նաև թերթիկների վրա գրանցված անհատական առաջադրանքների ձևով

ՀԱՎԵԼՎԱԾ 2



Եզրակացություն

Մայրենի լեզվի ուսուցումը բազմակողմանի գործընթաց է. այն իր մեջ ընդգրկում է զանազան սկզբունքներ ու տարաբնույթ աշխատանքներ, որոնք նպատակ ունեն բարձրացնելու ուսուցման արդյունավետությունը: Այդ սկզբունքների մեջ իր կարևորագույն տեղն ու դերն ունի զննականությունը:

Զննականության սկզբունքն այսօր բազմապիսի դրսևորումներ ունի, որոնցից յուրաքանչյուրն ունի իր արտահայտման առավել նպատակահարմար բնագավառը և կիրառության ձևը: Դրանք կարող են ձևափոխություններ կրել մատուցվող նյութով, երեխաների տարիքային առանձնահատկություններով, կիրառության տեղով, նպատակով ու խնդիրներով պայմանավորված:

Ահռելի դեր ունեն նաև խաղերը: Դրանք պետք է ընտրել կարևորել դասարանում սովորող աշակերտների տարիքային և անհատական առանձնահատկությունները և հետաքրքրությունները, ուսուցանվող նյութի հետ համապատասխանությունը: Խաղային միջավայրը պետք է կազմակերպվի այնպես, որ բացահայտվեն յուրաքանչյուր աշակերտի կարողությունները:

Այսպիսով՝ ճիշտ կազմակերպելու, աշակերտներին ճիշտ ուղղորդելու պարագայում խաղը դառնում է աշակերտների մտածողության զարգացման, ճանաչողական ունակությունների ակտիվացման միջոցներից մեկը՝ ապահովելով ուսումնական գործունեության հաջողությունը:

Գրականություն

1. Գյուլամիրյան Զ. Հ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, §Ձանգակ-97!, 2006:
2. Գյուլամիրյան Զ.Հ., §Ձանգակ! այբբենարանի և §Ես սովորում եմ գրել! աշխատանքային տետրի մեթոդական ուղեցույց, Երևան, §Ձանգակ-97!, 2003:
3. Գյուլամիրյան Զ.Հ., Դասի կազմակերպման առանձնահատկությունները վեց տարեկաններով համալրված առաջին դասարաններում, Երևան, §Լույս!, 1983:
4. Կրուտեցկի Վ. Ա. , Մանկավարժական հոգեբանության հիմունքներ, Երևան, §Լույս!, 1976:
5. Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, §Լույս!, 1977:
6. Քյուրքյան Ա. Ն., Տեր-Գրիգորյան Լ. Ա., §Շողիկ! այբբենարան, Երևան, §Էդիթ Պրինտ!, 2006: